ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԸ

Միության Ժողկոմսովետի որոշումը արտասահմանում գտնվող հայերի կամավոր վերադարձի մասին, ունի պատմական մեծ նշանակություն։ Թյուրքահայաստանից մեծ թվով հայեր իր ժամանակին ստիպված են եղել տարագրվել արտասահման։ Արտասահմանում գտնվող բոլոր իսկական հայրենասեր հայերը այժմ հնարավորություն ունեն վերադառնալ իրենց Հայրենիքը և ամբողջ հայ ժողովրդի հետ միասին անցնել ստեղծագործ աշխատանքի։

Ես ուրախ եմ ողջունելու մեր եղբայրներին հայրենի հողում և ցանկանալ նրանց, որ նրանք որքան կարելի է շուտ դղան սովետական մարդու ամբողջ բերկրանքը, պարծանքն ու վեհությունը, որպես Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի ազատ քաղաքացիներ։

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ստալինյան մրցանակի լաուրեատ, ՌՍՖՍՌ և Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր։

(«Սով. Հայաստան» № 260 1945 թ.)

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ ՎՐԱ

Դեռ 1921 թվին, երբ ես Կ. Պոլսից մեկնեցի Վիեննա, քանդակագործական բարձրագույն կրթություն ստանալու նպատակով, իմ միակ հույսն ու երազանքն այն էր, որ ակադեմիան ավարտելուց հետո ապրեմ ու ստեղծագործեմ իմ հարազատ Հայրենիքում՝ ազատագրված Սովետական Հայաստանում։

Արտասահմանյան կյանքի կոմֆորտն ու արտաքին շքեղ փայլը ինձ երբեք չեն գրավել. ես գիտակցում էի, որ այնտեղ երկրում, կառուցվում է մարդկային հասարակության բարձր ձևը հանդիսացող նոր, սոցիալիստական կյանք, տնտեսություն, կուլտուրա։ Այդ նորի կառուցմանը մասնակցելու պատիվն ու հաճույքն էր, որ քաշում էր ինձ դեպի իմ հարազատ հայրենի հողը։

Ակադեմիան ավարտելուց հետո, ինչպես որոշել էի, 1925 թվին, 23 տարեկան հասակում, ես եկա Սովետական Հայաստանի մայրաքաղաքը՝ Երևան, ուր մինչև օրս ապրում, ստեղծագործում եմ։

Այդ օրվանից ինձ համար, ստեղծագործական եռանդով լի երիտասարդիս համար, սկսվեց վառ հեռանկարով պսակված մի լայն ասպարեզ։

1926 թվից սկսած, թե Երևան քաղաքում և թե շրջաններում կառուցեցի մեր մեծ առաջնորդներ Լենինի և Ստալինի, ուսուցիչ գործիչների մոնումենտներն ու պորտրետները։ Մասնակցեցի Հայաստանում և Միության կենտրոնական քաղաքներում կազմակերպված ցուցահանդեսներին, Նյույորքի ցուցահանդեսին, համամիութենական և տեղական հուշարձանների կոնկուրսներին, քանդակեցի հայ անցյալ և ներկա կոփտուրայի խոշորագույն դեմքերի, Հայրենական պատերազմի հերոս հայ ռազմիկների պորտրետներ և այլն։ Այժմ ինձ հանձնարարված է կազմակերպել Հայաստանում պատմության մեջ առաջին անգամ բացվող կերպարվեստի բարձրագույն կրթական հիմնարկը՝ Գեղարվեստական ինստիտուտը։

Իմ ստեղծագործական և հասարակական գործունեության համար ես 1935 թվին Հայկական ՍՍՌ կառավարության կողմից արժանացա արվեստի վաստակավոր գործչի կոչման, ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահության կողմից կրկնակի շքանշանի՝ առաջինը 1939 թվին, իսկ երկրորդը վերջերս Հայաստանում սովետական կարգերի հաստատման 25-ամյա փառապանծ հոբելյանի առթիվ։

Հայ արվեստագետի իդեալները կարող են միայն կենսագործվել և շունչ առնել սովետական կարգերի պայմաններում, սովետական հարազատ երկրում։

Չկա հայ կերպարվեստի այլ օջախ, քան մեր հարազատ հայրենիքը։ Հայ ժողովրդի կերպարվեստը սովետական պետականության անմիջական ղեկավարության և հոգատարության ներքո ապրում է իր վերածնունդը։

Չմասնակցել անմիջականորեն այդ մեծ վերելքին, չստեղծագործել հայրենի հողի վրա, նշանակում է անմաս մնալ հայ ժողովրդի մեծ գործից։

Շատ անգամ իմ հաջողությունների առթիվ ես հիշել եմ իմ երիտասարդ տաղանդավոր այն ընկերներին, որոնք արտասահմանում դերվեցին և հնարավորություն չունեցան աճել ու զարգանալ հայրենիքում, ծառայել ժողովրդին։

Այժմ այդ հնարավորությունը մեր պետությունն ստեղծում է լայնորեն։ Նրանք չալու են նվիրվելու սոցիալիստական շինարարության պատմական մեծ գործին և մասնակից են դառնալու մեծ վերածննդին։ ՍՍՌՄ Ժողկոմսովետի պատմական որոշումը արտասահմանի մեր հայրենակիցների համար բացում է նոր դարաշրջան, նոր երջանիկ կյանքի համար, կուլտուրական վերելքի համար՝ հարազատ հողում, Սովետական Հայաստանում։

ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Արվեստի վաստակավոր գործիչ

(«Սովետ. Հայաստան» № 260, 1945 թ.)

ՆՐԱՆՔ ՀԱՅՐԵՆԻՔ ԵՆ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ

Նրանք Հայրենիք են վերադառնում, Հայրենիք, որի մի մասը ավերված է թշնամու ձեռքով, որտեղից նրանց անջատեց սրի ու սարսափի զարհուրանքը միայն։ Նրանք այժմ ճանաչում են, և իրոք ունեն այժմ միայն մի Հայրենիք—Սովետական Հայաստան։ Միայն Սովետական Հայաստանն է, իրականն ու հնարավորը։ Միայն Սովետական Հայաստանն է, որ պիտի ապրի, միայն Սովետական Հայաստանի բախտի հետ կարող է իր կյանքն ու ապագայի հույսերը կապել համայն հայությունը։

Հայրենիքները դյուրին չեն կառուցվում, հայրենիքը պետք է փորձել ստեղծել, որ կարելի լինի ձեռք բերել այն ծանրակշիռ համաստությունը, թե որքան դժվարին և տաժանելի գործ է այդ հայրենիք ձեռք բերելը։ Հայության արյունալի պատմության օրինակը ու խրատը գոնե հայերը լավ պիտի իմանան։ Դյուրին է կորցնել հայրենիքը, բայց դժվար է վերադառնել այն, երբեմն էլ անկարելի... Անշուշտ հայությունը դյուրին ու անպայքար չկորցրեց իր հայրենիքի մեծագույն մասը։ Արյունով ու քրտինքով պաշտպանեց հազարամյակներ հաշվող իր հայրենիքը։ Սակայն պատմությունը խնայել չէր կարող միշտ։ Պատմությունը լքի հայությանը։ Եվ հայության կյանքը կիսրգվեր ընդմիշտ, եթե նոր պատմության հրաշագործ ձեռքը չմեկներ դեպի հայությունը և նորից չվերակոչեր դեպի կյանք։

Այո, սրի ու սարսափի զարհուրանքը միայն անջատեց հայությանը իր հայրենիքից։ Հայկական բանաստեղծությունը հատուկ երգերի հատորներ ունի «զարիպի երգեր», որոնք սրտակսկիծ ողբեր են հայրենազուրկ հայության, որոնց հայրենապաշտ սիրտը իզուր տենչացել է, մեղմել իր հայրենաբաղձության ցավը։ Ինչ օտար երկրների շահախնդրության խոսք կարող էր լինել այն հայության մասին, որ երեք հազար տարի արյուն թափեց իր հայրենիքը պաշտպանելու և այնտեղ մնալու համար... Եվ մնաց էլ...

Հայրենազուրկ հայությունը հայրենիք է վերադառնում։ Դա ամենաբնական գործն է։ Ինչ ունի հայությունը օտար երկինքների տակ, հազար ու մի պատրանքների ենթակա։ Նա պիտի ապրի իր հայրենիքում, ջանա, ստեղծագործի իր սեփական տանը։ Այստեղ միայն իմաստ ունի նրա կյանքը։

ՍՍՌՄ Ժողովրդական Կոմիսարների Սովետի արտասահմանից հայերի Սովետական Հայաստան վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումները բարձրագույն մեծահոգության, աննախընթաց մեծագործության մի ակտ է։ Ջղում ենք մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինի մեծ սրտի ջերմությունը այդ գործի մեջ։ Նա փրկել է շատ հայրենիքներ, ծաղկեցրել շատ ժողովուրդներ, փրկել ու ծաղկեցնում է նաև Սովետական Հայաստանը։ Թող դա տուն և ծաղկի տարագիր հայությունը։

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

(«Սովետ. Հայաստան» № 260, 1945 թ.)